ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՓԾ/2020

ք. Երևան <<18>> 02 **2020թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հատուկ կապ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ղասաբօղլյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **փոստային կապի ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **45 750 000** (քառասունհինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

...կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրի դրույթները տարածվում են 01.01.2020թ-ից հետո ծագած փոխադարձ պարտավորությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն	<<Հատուկ կապ>> ՓԲԸ
ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա 130	ք. Երևան, Չարենցի 4/129
ՀՀ Ֆինանսների նախարարության	<<Ինեկոբանկ>> ԲԲԸ
աշխատակազմի գլխավոր հաշվապահություն	ՀՀ 2052822133751001
Հ/Հ 900110219000	ՀՎՀՀ 02509254
ՀՎՀՀ 01533334	
Ա. Մելիքյան	Մ. Ղասաբօղլյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/	/ տնօրեն/
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Տեխնիկական բնութագիր – Գնման ժամանակացույց

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական հատկանիշը և այլ պահանջներ
1.	ներքին փոստային և սուրհանդակային ծառայություններ CPV 64121400/1	Երթուղիների օրերը և ուղղությունները. • **Երևան՝ ամեն օր** **Երկուշաբթի** • Երևան-Թալին-Մարալիկ-Արթիկ-Գյումրի-Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Սպիտակ-Արագած-Ապարան-Աշտարակ-Երևան 1ա.Գյումրի-Աշոցք՝ Գյումրու սուրհ. 1բ.Վանաձոր-Թումանյան՝ Վանաձորի սուրհ. Գյումրի-Ախուրյան Վանաձոր- Գուգարք Գյումրի- Ամասիա Վանաձոր- Ալավերդի Գյումրի- Կումայրի Վանաձոր- Տարոն Վանաձոր –Բազումի • Երևան- Վարդենիս -Մարտունի -Գավառ – Չարենցավան-Բյուրեղավան - Նոր Հաճն- Կոտայք-Եղվարդ-Երևան **Երեքշաբթի** • Երևան –-Ճամբարակ-Իջևան-Դիլիջան-Սևան–Հրազդան- Երևան 1ա.Իջևան-Տավուշ- Նոյեմբերյան՝ սուրհանդակ • Երևան -Եղեգնաձոր-Վայք-Սիսիան-Գորիս–Ջերմուկ-Երևան 1ա. Գորիս–Կապան-Քաջարան-Մեղրի–Կապան ՝ սուրհանդակ • Երևան-Բաղրամյան-Արմավիր-Մեծամոր-ԱտոմակայանՎաղարշապատ-Մասիս-Վեդի-Արարատ-Արտաշատ-Երևան **Չորեքշաբթի** • Երևան–-Վարդենիս-Մարտունի–-Գավառ-Չարենցավան-Բյուրեղավան-Նոր Հաճն –Կոտայք-Եղվարդ-Երևան **Հինգշաբթի** • Երևան-Թալին-Մարալիկ-Արթիկ-Գյումրի-Սպիտակ-Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր–-Արագած-Ապարան-Աշտարակ-Երևան 1ա.Գյումրի-Աշոցք՝ Գյումրու սուրհ. 1բ Վանաձոր-Թումանյան՝ Վանաձորի սուրհ. Գյումրի-Ախուրյան Վանաձոր-Գուգարք Գյումրի- Ամասիա Վանաձոր- Ալավերդի Գյումրի- Կումայրի Վանաձոր-Տարոն Վանաձոր –Բազումի • Երևան – Ճամբարակ-Իջևան-Դիլիջան-Սևան–Հրազդան-Երևան • 1ա.Իջևան-Տավուշ- Նոյեմբերյան՝ սուրհանդակ **Ուրբաթ** • Երևան -Եղեգնաձոր-Վայք-Սիսիան-Գորիս–Ջերմուկ-Երևան 1ա. Գորիս –Կապան - Քաջարան-Մեղրի – Կապան ՝ սուրհանդակ • Երևան-Բաղրամյան-Արմավիր-Մեծամոր-Ատոմակայան-Վաղարշապատ-Մասիս- Վեդի- Արարատ - Արտաշատ- Երևան ***Ծառայության նկարագիր*** - Առաքման ենթակա փաթեթների քաշը՝ ոչ ավել քան 300 գրամ: Ավել քաշով փաթեթները հաշվարկվում են որպես երկու և ավելի ծրար (յուրաքանչյուր 300 գրամը մեկ ծրար) մինչև 2000գր, որից ավելը կդիտարկվի որպես ծանրոց: Առաքանիները հասցեատերերին առաքման ժամանակ հասցատիրոջ բացակայության դեպքում ենթակա են վերադարձման Պատվիրատուին: Ծառայության ծավալը-Մատուցվող սուրհանդակային (փոստային) ծառայությունների քանակը հնարավոր չէ սահմանել կապված ծառայության առանձնահատկությունից

		չհանձնված,եթե կատարողը կատարել է սույն պայմանագրով սահմանված իր պարտականությունները ամբողջ ծավալով,սակայն առաքանին հասցեատիրոջը չի հանձնվել՝ ա)հասցեի սխալ լիենլու պատճառով, բ)հասցեի փոփոխության պատճառով, գ)հասցեատիրոջ բացակայության դեպքում, դ)ծրարում նշված հասցեում հասցեատիրոջ չբնակվելու կամ չգտնվելու դեպքում, ե) հասցեատիրոջ կողմից առաքանին ստանալուց հրաժարվելու դեպքում: Սույն պայմանագրի իմաստով հասցեն համարվում է ստույգ,եթե առաքանու վրա լրացված հասցեում առկա են հետևյալ չափանիշները ներկայացված հերթականությամբ՝ ա) իրավաբանական անձի անվանումը, ղեկավարի անուն ազգանուն, բ)գրանցման վայրի հասցե ՝ փողոց,տուն,շենքի համար,բնակարանի համար, գ)բնակավայրի անվանում/մարզ,քաղաք,գյուղ/ դ)փոստային դասիչ ե) հեռախոսահամար Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առաքվող առաքանու՝ եթե առաքանին առաքվում է Հայաստանի Հանրապետության տարածքում,ապա անհրաժեշտ չէ լրացնել պետության անվանման դաշտը: • Առաքումը կատարվում է դեպի Ռուսաստան և ԱՊՀ երկրներ /բացառությամբ Ուկրաինա, Վրաստան, Ադրբեջան/ Առաքումն իրականացվում է բացառապես իրավաբանական անձանց

Ծառայության մատուցման ժամկետը և գումարը

Սկիզբը			***Ավարտը***	***Գումարը***
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը			***20.12.2020թ.***	***45 750 000***
Ծառայության մատուցման սակագներ				
Տարածք	***Քաշը /գրամ/***	***Սակագներ***	***Ներառյալ հարկեր***	***Ընդամենը***
Ք. Երևան	***300***	***216***	***Ներառյալ հարկեր***	***216***
ՀՀ տարածք	***300***	***432***	***Ներառյալ հարկեր***	***432***
ԱՊՀ երկրներ	***300***	***720***	***Ներառյալ հարկեր***	***720***
Ծանրոցներ	***1000***	***800***	***Ներառյալ հարկեր***	***800***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գանձապետական վարչություն
Հ/Հ 900011021984
ՀՎՀՀ 01533334

Մ. Մուղնիրյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<<Հատուկ կապ>> ՓԲԸ
ք. Երևան, Չարենցի 4/129
<<Ինեկոբանկ>> ԲԲԸ
ՀՀ 2052822133751001
ՀՎՀՀ 02509254

Մ. Ղասաբօղլյան
/ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
«18» «02» 2020թ. կնքված
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ՓԾ/2020 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	64121400/1	ներքին փոստային և սուրհանդակային ծառայություններ		9150000	9150000	20587500	20587500	20587500	32025000	32025000	32025000	45750000	45750000	45750000	**45 750 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գանձապետական վարչություն
հաշիվ 900010020947
ՀՎՀՀ 01531334
հեռ. 59-60-21
էլ. փոստ: police-treasury@mail.ru

Կ. Մովսիսյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Հատուկ կապ» ՓԲԸ
ք. Երևան, Զարենցի 4/129
«Ինեկոբանկ» ԲԲԸ
ՀՀ 2052822133751001
ՀՎՀՀ 02509254

Մ. Դասաբօղլյան
/տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի հուլիսի 18-ի
N 356-Ն հրամանի

«Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի
N 230-Ն հրամանի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրիհամարը՝ _____

ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմքընդունելովպայմանագրիկատարմանվերաբերյալ « » « » 20 թ. դուրսգրված N _____հաշիվապրանքագիրը, կազմեցինսույնարձանագրությունը հետևյալիմասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըկատարելէհետևյալաշխատանքները, կամմատուցելէհետևյալծառայությունները, կամմատակարարելէհետևյալապրանքները՝

Մատակարարվածապրանքների, կատարվածաշխատանքների, մատուցվածծառայությունների

ա-	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարման
	ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	/հա

Սույնարձանագրությաներկկողմհաստատմանհամարհիմքհանդիսացածհաշիվապրանքագիրընդունականեզրակացությունըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասնկցվումեն:

Ծառայությունըհանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունըընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվումէ, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդիանվանումը Վաճառողիանվանումը
(այսուհետ՝ Վաճառող)միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ապրանքի		
անվանումը	չափմանմիավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն